

## ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՑԻՆ ԽՆԴԻՐ

Հայերէն գրաբառ լեզուի յադակութեան  
Հրայ :

ԱՇԽԱՐՀԱՄ ԵՐԵՍԸ Եղած լեզուները երկուք կը բաժնուին . կենդանի , և մեռեալ կամ գիտնական : Լինդանին ան է , որ ազգ մը մինչեւ ցայսօր կը խօսի . մեռեալ ան՝ որ չխօսուիր , հապա միայն գրքերու մէջ կը կարդացուի , ու աղէկը՝ հին գրքերու մէջ , և գիտունք միայն գիտեն ան ու կը գրեն . ինչպէս է օրինակ իմն Յունաց հելլենացի լեզուն , լատինը , և առանց երկբայութեաննա և գրաբառ հայերէնը , որուն գրաբառ անունն ալ վրան է :

Ի՞այց վախեմ որ քիչ ատենէն այդշափ պատուոյ անունն ալ պիտի կորսընցընէ . վասն զի անհամեմատ աւելի աշխարհաբառ կ'ելլեն հիմայ գրքեր ու գրուածներ , քան թէ գրաբառ , մանաւանդ շատ կարդացուողները : Իսել է որ ազգին գիտնականքն ալ իրենց լեզուն կը թողուն , ու ամլին կը յարմարին՝ օգտի համար : Այս աս աշխարհաբառն ալ օրէ օր երթալով կը պակսի կ'իյնայ ազգին բերնէն . մինչեւ ատեն պիտի գայ , կարծեմ , որ գրաբառ անունը ինք պիտի յափշտակէ :

Հայերէն լեզուին ասանկ խեղձութեան ատենը գրաբառին յստակութեանը վրայ խօսելիս կարելի է որ զարմանք երենայ ոմանց , գուցէ և շատին : Ի՞այց մէյմը որ՝ կենդանի լեզուաց համար այնշափ պէտք ըըլլար աս ինդիրս , հապա մանաւանդ մեռեալ լեզուաց համար . ինչու որ կենդանին սովորութեամք կը սորվուի . և սովորութիւնը ուր որ կը քաշէ կը տանի նէ , երթալու է . իսկ մեռեալը գրքերէն , և մանաւանդ հին գրքերէն

կը սորվուի , և ահա հոն պէտք կ'ըլլայ ընտրութիւնը : Մէյմըն ալ որ որչափ ալ մեռած է նէ գրաբառ լեզունիս ու երթալով պակսելու վրայ , սակայն գիտենք որ գեռ գոնէ հայրենասէր իմաստնոց և գիտնոց առջին իր յարդը ունի և իր շնորհը կը փընտուի : Ի՞ս պատճառներուս համար անպատշաճ չսեպեցինք աս խընդրիս վրայ համառօտ մը գրել :

Ի՞ս լեզուներնուս յստակութեան շնորհը ին ընտրութեանը վրայ թէպէտ և ընդհանրապէս միաբան են գիտնականք ազգիս , բայց հնուց 'ի վեր երբեմն երբեմն յոմանց խօսքով և գրով կամթէ ըսենք գործքով՝ քիչ մը նոր և օտար վարդապետութիւն և օրինակ ալ գուրս ելած կը գտնուի անձնական կարծիքով կամ կողմնասիրութեան հոգւով , որ չգիտցողներուն մոլորութեան պատճառ կրնան ըլլալ , և հայերէն լեզուին նորէն մէկ ուրիշ տեսակ մը խանգարման : Ա ասն այսորիկ պէտք սեպեցինք որ աս ընտրութեանս վրայօք քանի մը հարկաւոր տեղեկութիւններ տանք անաչառ ոգւով , առանց անձնական կարծիքի և կողմնասիրութեան , և միայն լեզուին օգտին համար : Ի՞սոր համար ան կարծիքները հանողներուն անունն ալ չենք տար հոս տեղս . կը ինայենք իրենց պատիւը . վասն զի մեր միտքը և փոյթը հակածառութիւն և վիճաբանութիւն չէ ուրիշն գէմ , որուն և իցէ , հապա պարզապէս ճշմարտութեան և օգտի սէր , և վնասին դէմը առնել :

Արդ լեզուի իստակութիւն կամ յստակութիւն ըսելով՝ կ'իմանանք օտար լեզուի բառէ և ոձէ մաքուր և զուտ ըլլալը , և ան լեզուին յատուկ՝ և որչափ կարելի է նէ նախնական անխառն պարզութիւնը և սեփականութիւնը : Ի՞նանկ է նէ՝ կրկին է յստակութիւնը . բառի և ոձոյ : Այս որովհետեւ գրաբառը հին գրքերէ կը սորվուի , աս երկու յստակութեան վրայ քննելու ենք մեր հին հեղինակները .

վասն զի ամէնը մէկ յստակութեան տէր չեն , ինչպէս ամէնքս գիտենք և կը վկայենք . և դժուարութիւնը աս ձանաշմանս վրայ չէ , հապա անոնց ընտրութեանը կերպին վրայ . զի անկից կը կախուի անոնց յստակութեան վրայ մեր ըրած դատաստանը և ուրիշներուն հետեւելու կանոնը : Եւ աս ընտրութիւնը կարծ կերպով հասկըցընելու և ազգին առջին դնելու համար՝ կը հարկաւորինք հեղինակներնիս ըստ այնմ ընտրութեան դաս դաս բաժնել :

Իս դասերը թէ որ ժամանակի վրայ բաժնենք , ձամբան չելլեր , ու խնդիրը չենք կրնար լուծանել : Օ որ օրինակ թէ որ ըսենք , առաջին ժամանակ՝ առջի թարգմանչաց , երկրորդ ժամանակ՝ հինգերորդ դարէն մինչև ժը կամ ժդ դարը . և առջի ժամանակը բոլոր՝ ամենէն վեր բռնենք , անկէ ետեւ երկրորդը , ետքը երրորդը : Ա ասն զի մէյմը որ խիստ հին գրքերնիս շատը թարգմանութիւն ըլլալով , թարգմանիչը ով են եղեր և որը որ ատեն թարգմանուեր է , նոյն իսկ աստուածանչին մէկ քանի գրքերը երբ և որը որմէ թարգմանուած են , յայտնի չէ : Եւ և հին հեղինակներնուս ալ մէկ քանին յայտնի չէ որ կարգէն են . առջի թարգմանիչ աշակերտներէն , թէ երկրորդ կարգիններէն : Ո՞յէմ՝ ալոր՝ նոյն ժամանակի մէջ եղող հեղինակները կամ թարգմանիչները ամէնքը մէկ ջուր չեն : Օ որ օրինակ , թէ որ աստուածաշունչը և Եղնիկը մէկ կարգ դնելու ըլլանք Եւսեբիոսի քրոնիկոնին ու անոր եկեղեցական պատմութեր հետ ու Ածքնացւոյն հետ , կամ Եղիշէն Դաւիթ անյաղթին հետ նէ , մեծապէս կը սխալինք ըստ բազմաց հմտագունից . զի երկինք յերկրէ մէջերնին հեռաւորութիւն կայ : Որ ըսել է թէ՝ կամ անոնք մէկ ժամանակի գործքեր չեն , կամ նոյն ժամանակի գրքերը ամէնը

մէկ հայու ոճ չեն : Եւ աս բանիս ինքնիրեն կը վկայեն ամէնքաջ հայագէտք , որ ան գրքերը կարդացեր են :

Իս մէկ սխալ բաժանմունքը չորս հինգ մեծ վնաս ալ հետը կրնայ բերել : — Ո՞յէյմը որ՝ երկրորդ և երրորդ ժամանակին մէջի ընտիր՝ և առաջին ժամանակին մէկ քանիկէն ալ վեր հեղինակները՝ կը սկսինք անոնց մէ վար բռնել . զոր օրինակ Եղիշէն , Դաղար Փարագեցին , Դրիգոր արշարունին , Դգնատիոսը , և այլն . որ իրենց արդար յարգին և արժանեացը դէմկ'ըլլայ , և մեզի հետեւողութեան սխալ կանոն :

Երկրորդ՝ ինչ բան որ առջի ժամանակին գրոց մէջ գտնենք նէ , չար և բարի , ան միայն աղեկ է ըսելով կ'առնենք , միւս ժամանակաց ընտիր հայկաբան հեղինակներուն ալլաւագոյն և ազգային բառով և ոձով զրուցածը կը նետենք : ( Օրինակ իմն ողբերգութիւն և ողբերգակ ըսելու տեղը՝ Երգահանութիւն և Երգահան կ'ըսենք . կատակերգութիւն և կատակերգակ ըսելու տեղը՝ չաղութիւն և կոմիտէան կամ Երգայարդար կ'ըսենք . քերթող կամ բանաստեղծ ըսելու տեղը՝ պատետ կամ Վիպասան կ'ըսենք : Ածանց քննելու և հասկըցնալու որ ան Երգահանութիւն և Երգահան դնողը ով է նէ քրոնիկոնին մէջ , ոչ եթէ տրաշաման , տրաշամանութիւն և տրաշամօպօւն բառերուն բուն հին առմունքով Ճիշդ միտքը հասկըցնալով կամ հասկըցնելով դրեր է , հապա յետին դարու Յունաց առմունքով , որ տրաշաման կ'ըսեին ամէն բանաստեղծական երգի , ինչպէս յայտնի է յունագիտաց . և ինչուան այսօր ալ Յոյնք Եռաւուտքի կ'ըսեն , որ նոյն բառին աւրածն է : Եւ այս մտքով՝ Երգեցին ալ թարգմաներ են մեր նախնիք նոյն բառը՝ քրոնիկոնին լաւագոյն թարգմանութեան մէջ , այսինքն Ասկերերանին Աատթէի մէկնութեան մէջը . որ եթէ կոյր զկուրայն հետեւիլակէտք ըլլար նէ , ասոր մանաւանդ հետեւլու և Երգեցին ըսելու էր : Աակայն պյու

նախնիք ուղիղ միտքը թէատրոնի խաղը ըլլալը հասկընալով յետոյ , և հայու իդէայով աւելի մօտ հասկըցնելու զելով՝ դրեր են ողբերգութիւն , ողբերգակ կամ ողբերգակ քերթող : — Այսպէս ըսելու է երգայարդարին համար ալ : — Իսկ իրինանը և պահը ըսնաւ բան մը չեր նշանակէր հայու լեզուի մէջ . և վաղասանը կամ պատմիչ միայն կը նշանակէր , կամ բանաստեղծութեան մէկ տեսակը միայն :

Ասանկ է նաև ճարտասանին հուտարոր ըսելը , քերականին՝ գրամարդիկոս կամ դպիր , բնականին կամ բնախօսին՝ դիւինան , դիւիկան , ոտանաւորին կամ տաղին սրիտ կամ վեպ : Որ ուրիշ բան ըսել չեր , բայց եթէ կամ հոռմերէն խօսիլ , որ լեզուի յստակութեատ դէմ բան է , կամ հայու բառերուն գաղափարները բոլոր տակն ու վրայ ընելու խառնախնդորել , որ հոռմերէն խօսելէն ալ գէշ է : Աւ չետեմ ինչպէս կ'ըլլայ , որ մէկը հոռմի բառերուն նիւթական թարգմանութեանը համար՝ այնչափ ատելութիւն և բարկուի ունենայ երկրորդ թարգմանչաց հետ , և աս բուն իսկ զուտ հոռմերէն բառերը՝ ոչ միայն իբրև աւելի հասկանալի բան մը , հապա իբրև ազնուագոյն բան մը՝ սիրով ընդունի : Աւ այն ոսկեղէն ժամանակի յստակ լեզուն խօսողներն ու գրողները չիտեմ ինչ համարում կընային ունենալ ատանկ թարգմանութեանց վրայ : Ուկ որ հիմակուան ազգային համարումէն չափելու ըլլանք , շատ գէշ գուշակութիւն կ'ելլէ : Աւ ահա ասոնց նման բաներ կընան հասկըցուիլ հաւանաբար լորենացւոյն անխօսովն որ կ'ըսէ՝ թէ “ Քանզի անգէտք էին մերում արուեստի , ’ի բազում մասանց թէրացեալ գործն գըտանէր , . մէկ արուեստ բառին տակ իմանալով ամէն տեսակ թարգմանութեան պէտք եղած հմտութիւնները , որոնց պակասութիւնը ասանկ անյար մարութիւններու պատճառ կ'ըլլար : Աւ աս հմտական և փիլիսոփայական

չշգութիւնը հին թարգմանութեց ունանց մէջը պակաս ըլլալը ճանչնալէն ու վկայելէն ետքը , ալ պիտի չտարակուսինք թէ լորենացւոյն ատ խօսքը ինչ կը նշանակէ . և պիտի ընդունինք որ հին թարգմանչաց ամէն ըրածը ամենակատարեալ բան չէր , ուստի և թէ անանկ թարգմանութեանց համար ալ էր լորենացւոյն ատ խօսքը :

Այրորդ , ալ գէշը ան կ'ըլլայ՝ որ ինչ բան որ առջի միայն հետեւելի կարծուած ժամանակին մէջ չտեսնենք կամ չգըտնենք նէ , թէ և երկրորդ և երրորդ ժամանակներուն մէջ խիստ աղուոր և հայերէն մտքով ըսածը գտնենք , ան ալ կը մերժենք՝ չենք ընդունիր . ու իբրև թէ մենք զմեզ առջի ժամանակին թարգմանչաց կամ հեղինակաց մէկը սեպելով , կը սկսինք մենք անոնց տեղը նոր նոր ինքնահնար և ըստ քըմաց բաներ յարմարցընել : Ինչպէս , բանի մը նիւթ կամ պատճառք կամ իբրև և տարերբ իրաց և էքս ըսելու տեղը , որ փիլիսոփայական բառով առարկայ ըսեր են ոմանք , կ'ելլենք կ'ըսենք յանդիմակաց . անմարմին և չանձնաւոր կամ իմանալի և մտաւոր ըսելուն տեղը , որ ոմանք վերացեալ ըսեր են , կ'ըսենք պարզէալ . բանական արուեստ կամ տրամաբանութիւննելուն տեղը , կ'ըսենք խօսունն . սովորութիւն ըսելու տեղը , որ փիլիսոփայական բառով ունակութիւն ըսուեր է , կ'ըսենք ըմբուռանիսն , որ ամենեին անանկ բան նշանակեր . քերթուած կամ քերթած մը ըսելու տեղը , մբուռն կ'ըսենք . բայտ ըսելու տեղը՝ բարբառ կ'ըսենք . բայ ըսելու տեղը՝ երբեմն բառին տեղն ալ՝ բան կ'ըսենք . հանձարեղ մարդուն երեակայութիւնը կամ երեսոյթ , պատկեր՝ կերպարանք և տեսիլք մտաց ըսելու տեղը՝ ամէն տեղ կ'առնենք կ'անցնինք յնորդ կ'ըսենք . ու ըստ այնմկը գրենք , օրինակ իմն , թէ կ'յրգ վիպատանութեան զստեղծուած ինչ յնորից յանդիման կացուցանէ . և աւելի գէշ ու անյարմար՝ Ամենայն արուեստ ստեղ-

ծումն իմն ցնորդի է կ'ըսենք . որով հանչարեղ բանաստեղծները և արուեստաւորները ցնորեալ մարդիկ կ'ըլլան . վասն զի աս կարծեմ կը հասկըցուի բառին յատուկ նշանակութեամբը : Այսանկ երեւակայեալ բառերով լեզուն խառնափնդորելէն . ետքն ալ, մենք պաշարեալ ըլլալով կը կարծենք, ու կը գրենք ալ, թէ բառերուն ձըդութիւնը և որոշմունքը բանեցընելով և սովորութեամբ կ'ըլլայ . ու չենք մտածեր որ ատ բանիդ համար՝ նախ պէտք է ազգը իր հազարաւոր տարուան սովորութեամբ բանեցուցած բառին միտքը մոռնայ կամ մէկդի դնէ :

Այս հոգիէս առաջ կուգայ չորրորդ վնաս մ'ալ, որ երբոր բուն հին նախնեաց մէջ մէկ մտքով մը, թէ և ընդհանրապէս ուղիղ մտքով մը, գործածուած ըլլայ բառ մը, բայց ետքի հեղինակաց առմունքը աւելի ձշգելով՝ ուրիշ մտքի առեր ու սովորական ըրեր է նէ, մենք կ'առնենք կ'անցնինք հին նախնեացը, ու ան միայն առաջ քշել կը նայինք, որպէս թէ միւս հեղինակաց բառը անիծած ու նզոված ըլլար . ու մենք մեզի չենք հարցըներ թէ ով նզովեց, բայց եթէ մենք միայն . և որով իշխանութեամբ . ասոր պատասխանը չիտեմ : Օ որ օրինակ, հին նախնիք աստուածաբանութեան՝ աստուածիսութիւն ըսեր են . բայց ետքի հեղինակը ու հիմայ մենք իրաւամբք աստուածիսութիւն կ'իմանանք մանաւանդ Այսուեծոյ խօսիլը մարդարէից հետ, կամ հըետառ կի և մարդարէի ձեռքով՝ ազգի մը հետ : Իսկ աստուածային իրաց գիտութիւնը սորվեցընող ուսմանը ըսեր են և կ'ըսենք աստուածաբանութիւն : Վերականութեան, ոտանաւորի արուեստին և բանաստեղծութեան՝ ընդհանուր մտքով մը ըսեր են հիները դպրութիւն, վիպագործութիւն, վիպասանութիւն . իսկ քիչ մը ետքի հեղինակք լեզուին ըսեր են քերականութիւն, տաղաչափութիւն կամ չա-

փաթանութիւն, քերթողութիւն կամ բանաստեղծութիւն . վասն զի դպիրը և վէպը անորոշ են . առջինը ընդհանրապէս գրագէտ և գրագիր ( գէտնիո ) կը նշանակէ . երկրորդը՝ կամ պատմութիւն կը նշանակէ կամ պատմական գերթուածը միայն :

Այսանկ աս իրեք կերպովս ալ՝ նախնի հեղինակաց իսկ ընկալեալ իդէաներուն դէմ ելլելը, ու միայն ամենէն հինը՝ աղէկ գէշ, ձիշգ՝ ոչ ձիշգ, բռնելու երթալու է ըսելը, բոլոր լեզուն ու ամենուն միտքը խառնափընդորել կ'ըլլայ . անանկ որ՝ այնպիսի գրուածքը կարծեմ միայն գրողը կը հասկընայ, ան ալ հիմկուհիմայ . քանի մը տարիէն ետև վախեմ որ գրողն ալ չհասկընայ : Ո ասն զի մարդուս միտքը միշտ կը փոփոխի . և թէ որ՝ ի ընէ աղէկ միտք է նէ, հետզետէ զարգանալով և բանեցընելով կը հասունայ կը կատարելագործի . անանկ որ աս տարուանս հաւնածին եկած տարի չհաւնիր :

Հինգերորդ, ովինչ ընդհատ մեծ վնաս մ'ալ ան կ'ըլլայ որ՝ ինչ նոյնանշան բառ որ առջի թարգմանչաց ըսած ժամանակներնուս մէջ գործածուած չգտնենք նէ, թէ և բուն հայու պատուական բառ է, կ'արհամարհէնք, չենք բանեցըներ, և միայն առջի թարգմանչացը կ'առնենք կ'անցնինք . բանեցընողներն ալ իրը թէ հերետիկոսի կամ բարբարոսի մը տեղ կը դնենք : Օ որ օրինակ, սքանչելիք ըսելու տեղը՝ հրաշը ըսելը, կամ նշանագիրին բառ ըսելը՝ եօթը դժոխքի արժանի մահացու մեղք կը սեպէնք : Այս այնպէս կը զգուինք ու կը գանգտինք, որպէս թէ հրաշքը Ամոյետի բառ մ'ըլլար, և տառը՝ Բաֆրաստանցիի : Որով լեզուին բառերը քիչնալով՝ կ'աղքըտնայ, կը խեղչնայ ու կը տկարանայ : Այս ոչ երեք ալ կը նանք ցուցընել՝ թէ ատ բառերը հին թարգմանչաց ատենը չկար կամ թէ արհամարհէլի են եղեր, և ոչ թէ՝ դիպուածով եղեր է որ չեն գոր-

ծածուեր, կամ թէ մէկաները աւելի սովորական են եղեր ան ատենը, իսկ ասոնք քիչ սովորական . և քիչ սովորական ըլլալը հայութենէն չհաներ բառը . մանաւանդ որ բարդութեանց և ածանցմանց մէջ խիստ հին ատենն ալ կ'երենան . ինչպէս հրաշքը հրաշակերտ բառին մէջ, և այն : Ճւ թէ և ըսենք որ բնաւ ալ սովորական չէր ան ատենը ան բառերը, հայու ազգը միայն ան յիսուն տարուանը մէջ հայ ազգ էր, ետեւ եկողները նոյն հարց որդիքը չէին, մամշաթքայէն եկերէին : Հապա մենք արդեօք ուսկից կուգանք . ըլլայ թէ Տեւտոններէն, որ հայու բառերը չենք ձանչնար :

Այս հնասիրութեան հոգիէն առաջ կրնայ գալ մէկ բաղձանք կամ ջանք մ'ալ, որ ըստ ինքեան գովելի է . այս ինքն՝ նոր ուսմանց բառերը յստակել, և գէշերուն տեղը լաւը դնել : Ի՞այց երկու բան դիտելու է ասոր մէջն ալ : — Ո՞էյմը որ՝ մինակ նախնեաց բառ բանեցընեմ ըսելով, այլ և այլ բանի նոյն բառ չկապուի . զոր օրինակ թէրութիւն ըլսուի . problèmeին ալ նէտու-թիւն ըլսուի . démonstrationին կամ preuveին ալ inductionին ալ recommandationին ալ ընծայութիւն ըլսուի . balanceին ալ penduleին ալ կշռութիւն ըլսուի . rotationին ալ mouvement circulaireին ալ լուծանակել, շրջանակաց շրջութիւն ըլսուի . dogmeին ալ թէրութիւն ալ հրամանաւ ըլսուի : Ա ասն զի աս բանս շատ տեղ մեծ խառնակութեան և շփոթութե պատճառ կրնայ ըլլալ : — Ո՞էյմ' ալ որ՝ նոր ուսմանց բառերուն տեղը բուն նախնեացը չենք որ գտներ նէ, շատ լաւը և շատ յարմաթը դնելու ենք, և մենք մեզի ալ միաբան ըլլալու ենք, թէ որ ծաղը չենք ուզեր ըլլալ : (Ծրինակ իմ թաթէրութիւն կամ որ ըսենք, mathématiquesին՝ ուսուցանեթիւն կամ մաթեմատիկէան ուսուցն, տէնիթօրեին լիուուցէի եր, էլաստիզութիւն, էլաստիկութիւն, մենք

զմեգ կը խաբենք՝ ուրախանալով որպէս թէ շատ զարմանալի և նախնեաց պէս բառ գտանք . բայց այլք կարծեմ աւելի իրաւամբք կը զարմանան մեր տղայական ուրախութեանը վրայ : Ի՞նանկ չըլլայ որ ութը տասը բան շտկեմ ըսելով, անդին ետքը բոլոր ուսմանց լաւ լեզուն ալ նորէն շինել պէտք ըլլայ : — Իսկ մենք մեզի միաբան ըլլանք ըսենիս ան է որ, օրինակ իմ, scolastiqueին հայու բառով դըպրոցական ըսելուն տեղը՝ հոռմընանք ու ստուգատիէան ըսենք, ու ետքը նոյն տեղը հայութիւննիս միտք իյնայ ու տուգաւութիւննիս լուսնական ըսենք նէ, ով չխնտար քթին տակէն :

Այս չերիք ըլլայ բառից յստակութեան վրայ . որ իրաւ ան ալ խիստ պէտք է հայ լեզուին յստակութեանը համար . բայց թէ որ մտուցնիս դնենք թէ բառերնիս բուն հին կը բանեցընենք, անանկ է նէ մեզմէ աղէկ հայերէն գրող չկայ, սխալ և տըզայական բան դրած կ'ըլլանք մտքերնիս : Ա ամս զի բառերը առանց յստակընտիր աղուոր հայերէն ոձի՝ ուրիշ բան չեն, բայց եթէ աղուոր հայերէն ձայն մը կամ թէ ըսենք դողանջիւն մը : Երկուքն ալ մէկտեղ պէտք է : Ուստի մենք հիմայ երկուքին վրայօք ալ քննելով մեր հին նախնիքը, ըստ այսմ գաս բաժնենք անոնք . տեսնենք ո՞ր տեսակ բաժանումը աւելի խելքի և գործադրութեան կանոն ըլլալու յարմար կուգայ ամենուն մտքին :

Հայերէն գրականութիւնիս թարգմանչաց ատենէն ինչուք մը կամ ժդիգ դարը աղէկ քննելու որ ըլլանք, իրեք տեսակ այլ և այլ մատենագրութիւն կը գտնենք : Ո՞էյմը անոնցը որ բուն յատուկ հասարակաց ընտել հայու ոձով գրեր են : Երկրորդ անոնցը որ գաւառական կամ ինքնաշնար ոձով մը գրեր են : Երրորդ անոնցը որ օտար լեզուի խառնուրդ մտուցեր են :

Ա աջի դասը կը գտնենք ան գրքերուն մէջ, որ ինքիրէն յայտնի է՝ թէ նախնիք բոլոր հայ ազգին համար

գրեր կամ թարգմաներ են, ու բոլոր ազգն ալ ամէն տեղ, ամէն ատեն, ընդուներ ու կը բանեցընէ եղեր, ու հիմայ ալ կ'ընդունի ու կը բանեցընէ, կը հասկընայ ու համ կ'առնէ . ինչպէս է Աստուածաշունչ գիրքը, ժամագիրքը, պատարագամատոյցը, մաշտոցը և շարականը : Ասոնք ազգային գրքեր ըլլալուն՝ երկրայութիւն չկայ . և ահա ասոնք կ'ըլլան մեզի օրինակ բուն ազգային լեզուն և ոճը ձանչնալու և ընտրելու : Ուստի և մէկալ հեղինակներէն անոնք պիտի յատուկ ազգային ոճ սեպենք, որոնք որ ասոնց նման են կամ կը մօտենան, որ ատենի մարդ ըլլայ նէ ըլլայ : Ա ասն զի ազգ մը իր յատուկ ոճը բոլորովին չկրնար մոռնալ ու թողուլ կամ փոխել, թէպէտ և ոմանք ոմանք կրնան ծռիլ ու մոլորիլ . որուն օրինակը թըշուառաբար չի ալ պակսիր : Ա կարգէն կամ դասէն են, օրինակ իմն, Ագաթանգեղոսը, Բիւզանդը, Առքիւնը, Խանիկը, Խղիշէն, Անդակունին, Փարապեցին, Խորենացին պատմութեան մէջ շատ տեղ, Ա ուսաւոր շն Յաձախապատումը, Անկերերանին քանի մը մեկնութեանց բուն հին թարգմանութիները, Բարսզի Ա եցօրեայն, Ա երերիանոսի ձառերը, Կիւրզի երուսաղեմացւոյ կոչումն ընծայութեանը . վարինսերէն՝ Ծիրակացին, Արշարունին, Խոսրով, Աստիվերտեցին, Արգիս, Խոնատիոս, Ծնորհալին, Ախիթար գոշը : Ասոնց անխիղձ կրնանք հետեւիլ՝ թէ բառերուն, թէ ոճերուն, առանց վախնալու որ ազգային լեզուն և ոճը աւրենք . վասն զի ասոնք են հաւատարիմ աւանդապահք հին նախնեաց լեզուին . բաց ՚ի քանի մը մանր մունը բաներէ, որ հմուտ վարպետը և վարժութիւնը կը սորվեցընէ : Խղիշէին քանի մը Պարսից բառ բանեցընելը խիղձ ըլլայ օմանց . զի անոնք Պարսից արքունեացը և անոնց ազգին և օրէնքին մասնաւոր առմունքի բառեր ըլլալուն՝ բանեցուցած են, և լեզուի

յստակութեան վսաս մը չեն տարինչպէս աստուածաշնչին և միւս ընտիր գրոց ալ քանի մը եբրայական կամ յունական բառերը, որոնց կամ ծիշդը չկար հայերէն՝ որ դնէին, կամ թէ կար ու չեն գրեր նէ՝ վրանիս պարտք մը չեն դրեր որ առանց հարկի մը մենք ալ անոնք առնենք անցնինք :

Երկրորդ գասը, ըսինք, գաւառական կամ ինքնահնար ոճով մը գրեր են : Եւ աս եղած կ'ըլլայ՝ կամ ան ատենի գաւառի մը յատուկ մասնաւոր բառեր և կերպեր բանեցընելով, որ հասարակաց ազգային լեզուին մէջ այնչափ չեն լսուիր . կամռամկէն վեր երենալու և զարմանալի ըլլալու համար նորութիւն փնտուելով և նոր հեղինակ ըլլալ ուզելով . զի հին ատենը ընտիր պարզ գրաբառը հասարակաց ամենուն լեզուն էր : Ասանկէ Խորենացին պատմութեան առջի գրքին մէջ, ձառերուն մէջ, և մանաւանդ Պիտոյից գրքին մէջ՝ թէ որ անորն է նէ : Եւ կամ տաճկական և արաբական դպրութիւն ազգին մէջ մտնելէն՝ ասիական ձոռոմութիւն մը ու փարթամութիւն մը ոմանց փառաւոր երենալէն եղած կրնայ ըլլալ . ինչպէս է ընդհանրապէս ( ) ձնեցիին ոճը, Քովչան կաթողիկոսին, Աքծրունիին, Արեկացիին, Ապիստրոսին, և այլն : Ասոնց հայերէն ըլլալուն երկրայութիւն չկայ . բայց ինչպէս ըսինք՝ իբրև անձնական ոճ կամ իբրև գաւառական և մասնաւոր ժամանակի մը ոճ սեպուելու են : Ինտրանօք շատ բան, մանաւանդ բառ, կրնայ առնուիլ ասոնցմէ . ևս առաւելոր բանն որ ալ ազուոր հայերէնով առջի դասէն չունինք . բայց ոչ երբեք առջի դասին հաւասար կամ անկէ վեր կրնան սեպուիլ՝ ոչ բառից ընտրութեան և ոչ ոճի կողմանէ :

Երրորդ գասը, որ օտար ոճ խառներ է ըսինք նէ, երկուք է : — Ա է մը որ ասորիէ թարգմանած ըլլալով, թէպէտ բառերն ու ասացուածքն ըն-

տիր առջի դասին պէս , բայց ասորիի ծանր՝ դանդաղ և ճապաղ կամ ըսենք երկայնախօս ձանձրալի ոճն ու դարձուածքն առեր են . ինչպէս Եւսերիոսի Եկեղեցական պատմութիւնը , Աճբնացւոյն Օգօն գիրքը , Եպիքեմի գործքերը . — Ակյմ'ալ որ հոռմէ թարգմանած ըլլալով , կամ թէ և քովէ շարադրած , բայց թարգմանչին յունասիրութենէն ըսեմ , չէ նէ հայերենի խամութենէն , յունաթարանութիւնը հոտին :

Բայց աս յունաթարան հեղինակներն ալիրեք տեսակ են : — Ակյմը որ անանկ թաթխած ու բոլորովին ծըթռած յունաթարանութիւն ունին , որ հայու ականջ մը բնաւ ամենեին բան չհասկընար . ինչպէս Պաւթի անյաղթին թարգմանութիւները , որ նիւթական թարգմանութեամբ բառերու ալ , ոճի ալ , և լեզուի մասնաւոր անսովոր կերպերով ալ՝ բոլորովին հոռմէ : — Երկրորդ՝ որ իրաւ շատ յունաթարան են , բայց հայերէն աղէկ գիտցողը աշխատանօք կըրնայ քիչ մը բան հասկընալ . ինչպէս նոյն Պաւթի Ահմանաց գիրքը , Փիլոնի շատ տեղերը , Պղատոնի քանի մը գործքերը : — Երրորդը որ շատ աւելի մօտ է ազգային ոճին և հասկանալի հայու ականջի , ինչպէս Եւսերիոսի քրոնիկոնը , Պղեքսանդրի պատմութիւնը , Աիւսացին , Աազիանզացին . թէպէտ և ասոնք ալ շատ հեռու են առջի դասին յստակութենէն : Շատին կարծիքին նայելով՝ Սորենացին Պիտոյից գիրքն ալ աս կարգս է :

Այսոնք յունաթարան որ կ'ըսուին նէ , անանկ չէ թէ միայն ասոնց մէջ կը գտուին հեղենական ոճեր . հապա առջի և մանաւանդ երկրորդ դասին մէջ ալ կան գրեթէ ամէն ան ոճերը , բայց քիչ՝ ցանցառ , ասդին անդին ցանած , և խոհեմութեամբ առանց մութ ձգելու բանը՝ իրենց բոլոր հայերէն պարզութեանը հետ ան ալ քաւեցուցած են : Շատը ընտանի ու սովորական ալ են եղեր լեզուներնուս ,

մինչեւ գրեթէ կարելի ալչէ այսուհետեւ իրեւ միայն յատուկ յօւնական կտրելնետել : Իսկ ասոնց՝ մանաւանդ առջի և երկրորդ կարգիններուն յունաթարանութիւնը խոկած և շարունակ չարն և բարին մէյտեղ թնջուկ ու չքակուելու կծիկ մը եղած է . թողոր աս երկու կարգը յունական բառերը նիւթապէս թարգմանելով ալ կը գնեն , որ ևս առաւել անիմանալի կ'ըսեն բանը հայու ականջին , և առջի դասին մէջ չկայ ամենեւին ատբանդ , և ոչ ալ ասորիէ թարգմանութեանց մէջ :

Այս տեսակ ասորախօս և յունաթարան հեղինակները , մանաւանդ առջի և երկրորդ տեսակյունաթարանները ամենեին զգուշալի են հայերէն ոճի յըստակութիւն փնտողին . երրորդ տեսակն ալ՝ զգուշութեամբ կարգալի և հետեւելի : Այսանկներէն աղուոր հայերէն բառեր կամ մէկ մասնաւոր աղէկ զրուցուածք մ'որ գտուի նէ՝ առջի և երկրորդ դասին նման , անոնք միայն կընայ առնուիլ , և ոչ թէ բոլոր բոլորովին ոճին ու ամէն դարձուածքին հետեւիլ :

Այս յունաթարան հեղինակներուն հոռմէ նիւթապէս թարգմանած բառերուն վրայ՝ խոհեմութիւն և իրաւունք սիրող անձինք իրեք բան ալ գիտնալու են : Օի թէպէտ և ամէնքս ալ ազգովին չենք այնչափ սիրեր աս հոռմցած հեղինակները , բայց չափէ դուրս և արդարութեան գէմբան ալ ըսելու չէ :

Ակյմը ան է գիտնալիքը , որ սխալ չկարծենք թէ ամէն տեղ անանկ նիւթապէս թարգմանած անիմանալի կամ անսովոր բառեր շիներ են : ( ) րինակ իմն , ըսենք թէ 'ի բաց կալ ըսելուն՝ միշտ բացաւըսեր են , յայտնել կամ երեւեցուցանել ըսելուն՝ բացայացել , առնել կամ յարդարել ըսելուն՝ պրամարդէլ , անհնազանդութիւն կամ ստունգանութիւն ըսելուն՝ բարձրաւելին , գիտութիւն ըսելուն՝ նահայութիւն , համեմատել ըսելուն՝ բաղ-

դարել, հակառակիլ ըսելուն՝ յաղթասի-  
բել, ընթեռնուլ ըսելուն՝ վերծանել.  
զի այս զրպարտութիւն կ'ըլլայ անոնց  
վրայ, ինչպէս որ գրքերնին կեցեր են՝  
կը վկայեն :

Երկրորդ, սխալ կ'ըլլայ կարծելը՝  
թէ ետեւէն եկող հեղինակները այդ-  
պիսի յունաթան բառերը չարն ու բա-  
րին անխտիր խառն գործածեր են :  
Հոգիդ միրես, քանի հոգի կայ որ  
զարմանք կամ հիացումն ըսելու տե-  
ղը՝ արտահայտնելու ըսեր է, կրթելին՝  
ներակնել, մատենագիրին՝ շարագիր,  
արբանեակին կամ աշակերտին՝ յարա-  
հետեղ, միաբանութեան՝ շարաչայնու-  
թիւն :

Երրորդ, սխալ կարծելը և ըսելը  
զրպարտութիւն կ'ըլլայ, թէ այն յու-  
նաթան բառերէն շատ մըն ալ այն-  
չափ մտեր է ազգին մէջ, որ մինչեւ  
բուն աղէկ ազգայինները բոլորովին  
մոռցուեր ու խափանուեր են : Որ-  
պէս թէ ալ այնուհետեւ չէ մնացեր  
սպորագրութեան տեղը՝ ձեռնագիր ըսող,  
ներգրածելին տեղը՝ ազգել կամ աջողել,  
ներկային տեղը՝ առաջիկայ կամ մօտա-  
ւոր, բաղկացուցանելին տեղը՝ յօդել  
կամնիւթել, կազմել, շինել . վերադե-  
տողին տեղը՝ դէտ կամ սոտիկան, շղ-  
կապին տեղը՝ բանի մըյօդակապ կամ  
զօդ ըսող մը չէ մնացեր : Ծիտակ չէ  
այդ դատաստանը, ինչպէս յայտնի կը  
բողոքեն նախնեաց գրքերը . և ան-  
կարելի ալ է՝ որ ազգ մը իր բուն յա-  
տուկ ազգային մտքով ըսուած բառը  
մոռնայ կամ ձգէ, ու օտար իդէայով  
շինուածը առնէ անցնի : Ի՞տ բառե-  
րէն քանի մը հատ մնացեր են ալ նէ  
տեղտեղ, ուսումնական և մանաւանդ  
թարգմանած գրքերուն մէջ մնացեր  
են . ուրիշ տեղ մանաւանդ քովի շա-  
րադրած գրքերուն մէջ՝ ազգը իր բա-  
ռերը չէ մոռցեր, չէ կորուսեր . Ա՞էկ  
քանի մ'ալ կայ նէ մոռցուած, հոն  
ալ իրաւունք մը կայ . զի այնպիսի  
բառ է, օրինակ իմն, որ որոշ ան  
միտքը չտար, կամ տեղը ուրիշ լաւա-  
գոյնը գտուած ու դրուած է ուրիշ

հեղինակներէ : Օ որ օրինակ, հոռմի  
նորագութիւն հիմակուան աստուա-  
ծաբանական առմունքով մէկը ըսեր  
գոյաւորութիւն : Եւ կարծել՝ թէ ան  
բառին դիմացը աս է միայն ամէն  
տեղ յարմարը, մեծ սխալ է : Ո ասն  
զի նախնեաց գոյաւորութիւն դրած  
տեղը, բառին կազմութելը նայելով՝  
որ գոյաւորէն կ'ելլէ անմիջապէս, հոն  
ան էր յարմար հոռմի բառին մտքին  
( Ամաստ . ժկ . 21 ) . բայց նոյն հին  
նախնիք աւելի յարմար ըսեր են ըստ  
տեղոյն էութիւն, գոյութիւն, բը-  
նութիւն, հաստատութիւն, անձնա-  
ւորութիւն, ինքնութիւն : Ի՞ս ամէ-  
նը թողուլ ու ամէն տեղ գոյաւորու-  
թիւնը առնել անցնիլ, աղքատ խել  
քի նշան կ'ըլլայ, և միանգամայն սը-  
խալ :

Ի՞ս ամէն ըսածներնուս վրայօք  
տես Ռազմավէպիս հերուան Աեպտ .  
267—271 :

Ի՞նա ատ է մեր ընտրութիւնը և  
մեր բաժանմունքը : Հիմայ թող այլք  
տեսնեն թէ որ կերպ ընտրութիւ-  
նը և բաժանմունքը շիտակն է՝ ուղիղ  
դատմունքով, և ազգին մտքին յար-  
մար, և նախնեաց հետեւուն օրէնքը  
և ուղիղ ձամքան ցուցնող : Եւ հա-  
կառակ կարծիք կամ մոլորութիւն  
ունեցողներն ալ, գէթ 'ի շնորհս լե-  
զուին և իրենց պատուոյն, ետ կենան  
գոնէ ուրիշը գլխէ հանելէն, մանա-  
ւանդ թէ ըսելու է՝ գլխէ հանելու  
ջանքէն : Օի չենք կարծեր որ ասանկ  
յայտնի բանի մէջ մէկը գլխէ ելլէ :


Ա՞էկը կրնայ ըսել մեզի իրաւամբք  
թէ ուր են ատ բաներուդ մէկիկ մէ-  
կիկ փաստերն ու ցուցմունքի բան գրե-  
լը գիւրին չըլլար նէ, ձշմարտութիւն  
ալ այսչափ սուղ և դժուարագիւտ  
չէր ըլլար, և ոչ աղէկ մատենագիր-  
ները : — Իրաւ է . բայց մենք ալ հա-  
ւասար և աւելի իրաւամբք պատաս-  
խան կուտանք՝ որ ոչ եթէ չունինք,  
հապա երկան կ'ըլլար, և աս տեղս  
յատուկ գիրքը չէ . հիմկուհիմայ

այսչափն ալշատ է հասկըցողին : Եւ  
կը հարցընենք՝ թէ ատ հարցմունքը  
մեզի ընողը՝ հակառակ կարծիքէն  
ի՞նչ փաստեր ու ցուցմունքներ տեսեր  
է որ մեզմէ ալ կը պահանջէ : ] եղուի

ամէն մէկ բանը անանկ շատ պատ-  
ճառներով ու փաստերով ամենուն  
ցուցընելու չգար, ու հարկ ալ չէ .  
ազգին ականջն ու ախորժակն է անոր  
'ի բնէ դատաւորը . ազգը կը դատէ .

Հ . ԱՐՍ . Բ

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



## ԱՅՆԿԱԴԱՐ :

Այս կաֆուր քաղաքը ասկէ տաս-  
նըեօթը տարի առաջ գրեթէ նորէն շի-  
նեցին Ինդղիացիք արևելեան Հընդ-  
կաստանի ծայրը՝ Այնկափուրի նե-  
ղուց ըսուած տեղը : Ի՞ս քաղաքը ո-  
րովհետեւ մօտ է Այումատրա, Շաւա,  
Պորնէոյ կղզիներուն և Հնդկաց ար-  
շիպեղագոսին ուրիշ կղզիներուն, ու  
գիմացէն կ'անցնին Հնդկաստանէն  
ու Եւրոպայէն Չին գնացող նաւե-  
րը, իրեն դիրքը վաճառականութեան  
իհստ յարմար ընկած է : Ա աճառա-

կանութիւնը ազատ է հօն ու ամե-  
նեին տուրք չունի . աս պատճառաւ  
քիչ ատենի մէջ շատ առաջ գնաց .  
1819ին հազիւ թէ քանի մը Այլե-  
զիացի ձինորսներու տնակներ կային  
հօն, ու գրեթէ աւազակներու բնա-  
կարան էր . իսկ հիմա շատ մեծ քա-  
ղաք մը ձեացած է՝ որ գրեթէ 40,000  
բնակիչ ունի :

Ամէն ազգէ վաճառականներ կը  
գտնուին մէջը . այսինքն Հայ, Չի-  
նացի, Արաբացի, Հնդիկ ու Ինդ-